«ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/71-2

ք. Երևան «02» 07 2021թ.

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ը ի դեմս տնօրենի ժ/պ՝ Գ. Ավետիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ԱՐՄՓԱՅՓ» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Տ. Բավեյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 1275650 (մեկ միլիոն երկու հարյուր յոթանասունհինգ հազար վեց հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը

կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում: Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման

ʊգամանքը: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է ;յմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի ;տմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, ;այն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու ʊ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված ;գով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային ;տավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար ;մերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության ;ևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ ;խարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և ;տակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության ;ոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են ;ռնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը ;ունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ ; մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ ;յմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ ;այմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով ;ստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, ;անց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ ;կողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ ;այմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, ;աճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված ;ասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության ;ենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, ;ե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին ;այաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու ;ամար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար ;առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի ;անրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ;ավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության ;ատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի ;ոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի ;նբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին ;ից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, ;որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ ;պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր ;դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը ;ռանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան ;պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5

ային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված է:

.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (թյուններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

այմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի ան շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս նագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու ոդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված ությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող ով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման ով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի ետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ սական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ վորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ ությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների ումը:

3.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը ակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը մանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված ակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի նային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների ով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր բանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 աձները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

3.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի պետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ	«Արմփայփ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78	ՀՀ, ք. Երևան Դավիթ-Բեկի 133
«Կոնվերս բանկ» ՓԲԸ	«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1930000358920100	Հ/Հ 1510030481140100
ՀՎՀՀ 00000911	ՀՎՀՀ 00856074
տնօրենի ժ/պ----------Գ. Ավետիսյան	տնօրեն----------Տ. Բավեյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«02» 07 2021թ. կնքված
ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/71-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ* - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի								Մատակարարման		
	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը**	Հատկանիշները (տեխնիկական բնութագիր)	Չափման միավորը	Միավոր գինը (ՀՀ դրամ)	Գումար (ՀՀ դրամ)	Ընդհանուր քանակը	Հասցեն	Ենթակա քանակը	Ժամկետը
5	44163200	PE անկյունակ (PN16) զոդման d=63 45⁰	Poliran Ltd	PE անկյունակ (PN16) զոդման d=63 45⁰ սև գույնի	հատ	1150	57500	50	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87՝ ըստ Պատվիրատուի պահանջի	50	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 30.12.2021:
6	44163200	PE անկյունակ (PN16) զոդման d=63 ,90⁰	Poliran Ltd	PE անկյունակ (PN16) զոդման d=63 90⁰ սև գույնի	հատ	1650	66000	40	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87՝ ըստ Պատվիրատուի պահանջի	40	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 30.12.2021:
7	44163200	PE եռաբաշխիչ (PN16) զոդման 63x50x63	Poliran Ltd	PE եռաբաշխիչ (PN16) զոդման 63x50x63 սև գույնի	հատ	3000	45000	15	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87՝ ըստ Պատվիրատուի պահանջի	15	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 30.12.2021:
8	44163200	PE եռաբաշխիչ (PN16) զոդման 63x63x63	Poliran Ltd	PE եռաբաշխիչ (PN16) զոդման 63x63x63 սև գույնի	հատ	1950	29250	15	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ	15	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ ըստ Պատվիրատուի

									Արարա տյան 87՝ ըստ Պատվիրատուի պահանջի		պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 30.12.2021:
9	44163200	PE կցամաս (PN16) զոդման d=63	Poliran Ltd	PE կցամաս (PN16) զոդման d=63 սև գույնի	հատ	1000	80000	80	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87՝ ըստ Պատվիրատուի պահանջի	80	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 30.12.2021:
10	44163200	PE անցում (PN16) մետաղ d=63 ուղիղ, զոդման	Poliran Ltd	PE անցում (PN16) մետաղ PE-ն d=63, մետաղն d=50 (2") ն/պ, զոդման համար սև գույնի	հատ	7700	154000	20	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87՝ ըստ Պատվիրատուի պահանջի	20	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 30.12.2021:
11	44163200	PE անցում (PN16) մետաղ d=63 ուղիղ , զոդման	Poliran Ltd	PE անցում (PN16) մետաղ PE-ն d=63, մետաղն d=50 (2") ա/պ, զոդման համար սև գույնի	հատ	8800	176000	20	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87՝ ըստ Պատվիրատուի պահանջի	20	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 30.12.2021:
12	44163200	PE անցում (PN16) մետաղ (ամերիկանկա) զոդման d= 63-50	Poliran Ltd	PE անցում (PN16) մետաղ (ամերիկանկա) զոդման համար PE-ն d=63, մետաղն d=50 (2") ն/պ սև գույնի	հատ	15420	308400	20	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87՝ ըստ Պատվիրատուի պահանջի	20	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 30.12.2021:
13	44163200	PE անցում (PN16) մետաղ (ամերիկանկա) զոդման d= 63-50	Poliran Ltd	PE անցում (PN16) մետաղ (ամերիկանկա) զոդման համար PE-ն d=63, մետաղն d=50 (2") ա/պ սև գույնի	հատ	16500	330000	20	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87՝ ըստ Պատվիրատուի պահանջի	20	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 30.12.2021:
16	44163200	PE կարճախողովակ (PN10) զոդման d=63	Poliran Ltd	PE կարճախողովակ (PN10) d=63 զոդման	հատ	1500	15000	10	ՀՀ, ք.Երևան, Մարշալ	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից

				համար սև գույնի (կցաշուրային միացումների համար)					Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87՝ ըստ Պատվիրատուի պահանջի		սկսած՝ ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 30.12.2021:
18	44163200	PE փոխակերպիչ PN16	Poliran Ltd	PE փոխակերպիչ PN16 d=63 -40 զոդման համար սև գույնի	հատ	1100	5500	5	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87՝ ըստ Պատվիրատուի պահանջի	5	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 30.12.2021:
19	44163200	PE փոխակերպիչ PN16	Poliran Ltd	PE փոխակերպիչ PN16 d=63 -50 զոդման համար սև գույնի	հատ	900	9000	10	ՀՀ, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 կամ Արարա տյան 87՝ ըստ Պատվիրատուի պահանջի	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ ըստ Պատվիրատուի պահանջի՝ 20 օրացուցային օրվա ընթացքում, ոչ ուշ քան 30.12.2021:

**** Ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված, համապատասխան սերտիֆիկատով, անհրաժեշտության դեպքում գործարանային փաթեթավորման: Մատակարարումն ու բեռնափոխադրումը իրականացնում է մատակարարը Պատվիրատուի նշած վայր:***

***Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:*

ԳՆՈՐԴ

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930000358920100
ՀՎՀՀ 00000911

տնօրենի Ժ/պ----------Գ.Ավետիսյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Արմփայփ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան Դավիթ-Բեկի 133
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510030481140100
ՀՎՀՀ 00856074

տնօրեն----------Տ. Բավեյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«02» 07 2021թ. կնքված
ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/71-2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
5	44163200	PE անկյունակ (PN16) զոդման d=63 45⁰	-	-	-	-	-	57500	57500	57500	57500	57500	57500	57500	57500
6	44163200	PE անկյունակ (PN16) զոդման d=63 ,90⁰	-	-	-	-	-	66000	66000	66000	66000	66000	66000	66000	66000
7	44163200	PE եռաբաշխիչ (PN16) զոդման 63x50x63	-	-	-	-	-	45000	45000	45000	45000	45000	45000	45000	45000
8	44163200	PE եռաբաշխիչ (PN16) զոդման 63x63x63	-	-	-	-	-	29250	29250	29250	29250	29250	29250	29250	29250
9	44163200	PE կցամաս (PN16) զոդման d=63	-	-	-	-	-	80000	80000	80000	80000	80000	80000	80000	80000
10	44163200	PE անցում (PN16) մետաղ d=63 ուղիղ, զոդման	-	-	-	-	-	154000	154000	154000	154000	154000	154000	154000	154000
11	44163200	PE անցում (PN16) մետաղ d=63 ուղիղ , զոդման	-	-	-	-	-	176000	176000	176000	176000	176000	176000	176000	176000
12	44163200	PE անցում (PN16) մետաղ (ամերիկանկա) զոդման d= 63-50	-	-	-	-	-	308400	308400	308400	308400	308400	308400	308400	308400
13	44163200	PE անցում (PN16) մետաղ (ամերիկանկա) զոդման d= 63-50	-	-	-	-	-	330000	330000	330000	330000	330000	330000	330000	330000

16	44163200	PE կարճախողովակ (PN10) զոդման d=63	-	-	-	-	-	15000	15000	15000	15000	15000	15000	15000	15000
18	44163200	PE փոխակերպիչ PN16	-	-	-	-	-	5500	5500	5500	5500	5500	5500	5500	5500
19	44163200	PE փոխակերպիչ PN16	-	-	-	-	-	9000	9000	9000	9000	9000	9000	9000	9000

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930000358920100
ՀՎՀՀ 00000911

տնօրենի ժ/պ ———— Գ. Ավետիսյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Արմփայփ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան Դավիթ-Բեկի 133
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510030481140100
ՀՎՀՀ 00856074

տնօրեն ———— Տ. Բավեյան
/ստորագրություն/
Կ.Տ.